

706 NOV 2011

884.83
4-88

96

ԱՐ Նուէր մանուկներին ՀՅԱՆ

Տ. Լ. ԿՕՐԲԱ

ԽՐԱՄԱՏԻ ԵԶԵՐՔԻՆ

ԽՀԱՏ
1907

Թարգմ. ֆրանսերէնից

Տ. Հ. Դ.

ԹԻԳԼԻՄ

ԵԼԵՔՏՐԱԿԱՐԳ ՏՊԱՐԱՐՄԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7.

1907

(89)



23 MAY 2013

1819

ՀԱՅՈՒԹԵԱ ԻՇԽԱՆՄԱՆ

միջ ու Առ կայ ունեար վազու զբաց
պատութեա և առ ստենու և տուարուայ
ին Ֆի և տանած գծ վազու մշայտաՍ
ու առ առ շուր ուրի ու աշելութէ և
աս համաց վար ու միորակայի ամ
ուս սպաց ու զազաւ մարքար չորս խայ
ու առ ամենա ամենա Այս ամբական ծայր
ու առ ամենա ամենա ամենա ամենա ամենա
արտի գեղեցիկ օրերից յա
մէկն էր Արևը տաքաց ար
նում էր սառած գետինը ըստ
և մեղմ հովերը գարնան
գալուստն էին աւետում առ
ձանապարհի կողքով փորածոց
խրամատի մօտից մի փոքրիկան
ձայն լսուեց և յանկառծ երևաց... Այս առ
հէնց նա էր Աշխոյժը և նա առ
Խեղճ, նա ուղեց դունչը դուրս հաշար
ներ, բայց արեի ճառագայթները ծակեանց
ցին նրա աչքերը և նա շտապով վերաշնչը
դարձաւ իւր մութ թագատոցը:

Պէտք է ձեզ ասեմ, որ Աշխոյժը ամ
քնած էր ամբողջ հինգ ամիս և նրա աշակե



Քերը արևի պայծառ լոյսը այլ ևս չէին
կարողանում տանել:

Սակայն երևի չէք իմանում թէ ով
է «Աշխոյժը»:

Նա մոխրագոյն է, ունի երկար բա-
րակ պոչ, պսպղուն աչքեր և չորս շատ
կարճ թաթիկներ. մարմինը ծածկուած
է թեփերով, տունը մի հին պատ
հասկացաք ով է:

Այն, Աշխոյժը մի խլէզ է, այն սիրուն
խլէզներից մէկը, որոնք ձեզ նայում են
զարմացած աչքերով, երբ դուք նրանց
պատի մօտով անցնում էք:

Աշխոյժը նորից մտաւ այն մութ
ձեղքի մէջ, որտեղ աշունքից ի վեր
քնած են այն պատի բոլոր խլէզները:
Նա հետաքրքրութեամբ նայեց նրանց և
յանկարծ բարձր քրքջաց:

—Հա, հա, հա, որքան ծիծաղելի են,
բացագանչեց նա. ամենքը քնած են բե-
րանները բաց: Է՞յ, զարթեցէք, վեր կա-
ցէք, գարունը եկել է:

—Նրանք խլացել են, շարունակեց
նա հեռանալով. դէհ, ինչ անեմ, թող
մնան:

Մեր բարեկամը հպարտանալով, որ
միայն ինքն է վազվզում, իսկ իւր եղ-
բայրները դեռ քնած են, գնում է և
մեկնում ջերմ արևի տակ, իւր փոքրիկ
ճանկերը խրելով պատի մէջ:

Յանկարծ մեր խորամանկ խլէզը մի
ծանօթ ձայն լսեց. նա պոչը շարժեց և
աչքերը փայլեցին ուրախութիւնից. նա
վազեց թագնուեց մի փունջ խոտի ետև,
որ դուսած էր երկու քարի մէջտեղը,
և այստեղ մնաց անշարժ, աչքերը չռած,
ականջները սրած:

Տը՝ զզ... Տը՝ զզ... երգում էր մի կա-
պոյտ ճանձ, թռչելով նրա շուրջը:

Խլէզը նրան աչքից չէր թողնում և
երեմն երեմն լպստում էր իւր շրթունք-
ները երևակայելով, որ արդէն ճաշ-
կում է այն համեղ պատառը:

Տը՝ զզ... տը՝ զզ... և ճանձը թռաւ
նստեց պատի միւս ծայրին մի քարի
վրայ:

Աշխոյժը դժգոհութիւնից դէմքը ծըռ-
մոեց, բայց ճանձը, որ ընդունակ չէ
երկու բոպէ միւնոյն տեղը մնալու,
նորից մօտենում է տղտղալով. այժմ նա

Թռչում է այն խոտի վնջի շուրջը, որի
ետևը մեր Աշխոյժը դարձն է մտած:
Փոքրիկ անխելքը չի տեսնում այն երկու
սկ աչքերը, որոնք իրան հետեւմ են:

—Ուշագիր լինեմ, ինքն իրան ասում
է խլեղը, չկորցնեմ։ Մի փոքր բարձրա-
նամ և... մէկ, երկու, համ. ահա բռնեցի.
ինչ լաւ ճաշ կունենամ. ի՞նչ փափլվիկ է...

Աշխոյթը զմայլած ճպճպացնում է
աչքերը և կամաց շարժում իւր պոչի
ծայրը, որ խէզների ամենամեծ ուրա-
խութեան նշանն է:

—ինչ համեղ է, բացագանչում է նա
շրթունքները չփշփացնելով. այժմ անց-
նենք մի ուրիշիւ:



Ես ին բա զնիքօն պղբառա չ'ո՞ւ—
մոցիս միս նորդի ուշ չեղի՛—
-այ զուան յամցմա դո միտուղոք չամաք
դո ամ ոյժ նորոշ ուժ նմի բանու
լիբոքը Բ. Հայիսկան ամ
անի մի օրից յետոյ ան-
ցորդները կարող էին
տեսնել բոլոր խլէզնե-
րին արևի տակ տաքա-
նալիս՝ հայրերը՝ հաստ-
լիկ և լուրջ, մայրերը
—աւելի քնքոյշ և նուրբ և երեխաների
մի ամբողջ բանակ—կայտառ ու անհոգ։
Աշխոյժը անշարժ մի քարի վրայ
կարծես մտածում է. յանկարծ նրա եղ-
բայրներից մէկը կամաց մօտենում է
նոան և աւանջեն ծուռմ։

— Ե՞ր, Աշխոյժ, ինչ էս անում այստեղ
մեն-մենակ:

—Ի՞նչպէս վախեցրիր ինձ, Մոխրիկ,
ասաց մեր բարեկամը թռչելով. Ես
մտածում էի մեր բարեկամուհի Թօփա-
լի մասին:

—ինչ ասացիր, Թօփան, այդ ովէ:
—Միթէ չես յիշում այն սիրուն
կանաչ գորտին, որ անցեալ ամառը շա-
րունակ ինձ հետ խօսում էր. նա որ
այնպիսի գեղեցիկ աչքեր ունէր: Աշնանը
նա մտաւ խրամատի մէջ, այնուեղ, պա-
տի տակ ու էլ չի երևում. երանի իմա-
նայի, թէ ինչ պատահեց նրան: Կուզես,
Մոխրիկ, կանչենք. Ես շատ եմ ուզում
նրան տեսնել:

Երկուսն էլ սկսեցին Թօփանին ձայն
տար՝ բայց գորտը չպատախանեց և
Աշխուժիկը ոխուր վերադարձաւ իւր
տեղը:

Վայ առաջ պատ-
րաճն ու ուսուալ-իւսաւ լրոցին մի
լոյն վայ մի ծանչն ցեղովքմ
ու այս ծարքաւ. Առծանի սծնայ
չ նուժան



Վայ առաջ պատ-
րաճն ու ուսուալ-իւսաւ լրոցին մի
լոյն վայ մի ծանչն ցեղովքմ
ու այս ծարքաւ. Առծանի սծնայ
չ նուժան



Եկու շաբաթից յետոյ
խրամատի եղեգները
արդէն սկսում էին կա-
նաչել և միջատների մի
ամբողջ բանակ լցնում
էին օդը իրենց տըզ-
տղոցով:

Աշխուժիկը շատ էր ձանձրանում,
որովհետև իւր բարեկամունի փոքրիկ
կանաչ գորտը դեռ չէր երևում. նա են-
թաղրում էր, որ խեղճը մեռած կըլինի: Մի
անգամ, երբ նա նայում էր մի մըջիւնի,
որը խրամատի մէջ էր ընկել, նկատեց
օդի փոքրիկ պղպջակներ, որոնք բար-
ձրանում էին ջրի երեսին. այդ միջոցին
մի լայն դունչ երևաց:

—Նա է, կանչեց խլէզը ուրախ ձայ-
նով. Ես ձանաչում եմ նրա կանաչ հագուստը

աև բծերով և նրա մեծ-մեծ աչքերը տսկէ շրջանակով։ Է՛յ, Թօփալ—չի պատասխանում։ Աւելի բարձր կանչեմ. բարե, Թօփալ։

—Ո՞վ է կանչում, հարցրեց մի խըռպոտ ձայն։

—Ես, քո բարեկամ Աշխուժիկը, մոխրագոյն խլէզը։

—Ա՛հ, դժւ ես, ես քեզ չճանաչեցի. դեռ բոլորովին շշմած եմ. այնպէս մութ էր այնտեղ, խրամի խորքում։ Ո՞րքան գոհ եմ, որ քեզ տեսայ, բարեկամ Աշխուժիկ. դէհ, ասա, ինչպէս անցկացրիր ձմեռը։

—Շատ լաւ, շնորհակալ եմ, իսկ դժւ, Թօփալ։

—Ոչինչ. անցեալ աշունք գլխիվայր մտայ տղմի մէջ, ինչպէս բոլոր գորտերն են անում. աչքերս փակեցի և էլ բան չեմ յիշում. գուցէ մենք սառանք, փէտացանք ձմեռուայ, խիստ ցըրտերից. ինձ պատմել են, որ երբեմն այդպէս է լինում։

—Հա, ես մի լուր ունեմ քեզ յայտնելու, Թօփալ, բացագանչեց խլէզը

ուղղուելով. նայիր ինձ, արդեօք ոչինչ չես նկատում։

—Ո՞չ։

—Միթէ չես նկատում, որ ես նոր հագուստ ունեմ։

—Ինչպէս, նո՞ր հագուստ։

—Այս, սիրելիս. յիշաւմ ես որ իմ հին հագուստը սկսում էր պոկուել, երբ դու մեզ թողեցիր։

Մի անդամ քարին քսուելով ես այն բոլորովին հանեցի և ձմեռուայ համար նոր հագուստ ունէի։

—Շնորհաւորում եմ, սիրելիս, իսկապէս շատ սիրուն եաւ։

—Բայց ես մոռացայ հարցնել քո ընտանիքի մտախն. ասա խնդրեմ, ինչպէս են ծնողներդ, եղբայրներդ և քոյրերդ։

—Բոլորն էլ լաւ են, շնորհակալ եմ, բացի այն խեղճ «մագլցողից»։

—Ինչպէս, քո եղբայր մագլցողը հիւանդ է և դու ինձ չէիր ասում։

Այս, սիրելիս, իրեն պատահած փորձանքից յետոյ նա շատ գժուար է կազդուրում։ Ինչ արած՝ մեղանից ամեն մէկը ունի իւր ցաւերը։

— Ի՞նչ փորձանք է պատահել քո
եղբօրը:
— Լսիր, պատմեմ. յիշում ես, որ մեր
խրամատի մօտով ամեն օր մի փոքրիկ
տղայ էր անցնում:

— Այն փոքրիկ տղան, որ այնպիսի
գեղեցիկ եղանակներ էր սուլում:

— Հէնց նա. դու գիտես որ նա քարեր էր
զցում. երևի խաղալու համար էր, որով-
հետև նա չար չէր. բայց եթէ երեխա-
ներն իմանային, թէ որքան վնաս կարող
են հասցնել քարեր զցելով... Մի օր էլ
եղբայրու տաքանում էր հէնց այստեղ
արևի տակ. տղան անցաւ և մի քար
զցեց. ես մի ցաւալի ձայն լսեցի. վազե-
ցի և մազլցողին գտայ պատի տակ, տես-
նեմ տնքալով գլորւում էր գետնի վրայ:
Մեր ամբողջ ընտանիքը հաւաքուել էր
նրա շուրջը. նա հեկեկում էր, լաց էր
լինում, մի խօսքով, սարսափելի տե-
սարան էր: Երևակայիր՝ քարը կտրել էր
նրա պոչը...

— Վայ, խեղճ, երևի նա շատ էր
տանջւում:

— Այն, երկար ժամանակ հիւանդ էր:

Հայրիկն ու մայրիկը նրա համար ուտելիք
էին բերում: Հէնց այն ժամանակից նա միշտ
տիսուր է և մենակ է ապրում պատի մի
անկիւնում:

— Ես ուզում եմ նրան այցելել,
ասաց թօփալը խղճալով: Նրան կլտանեմ
հէնց իմ առաջին անգամ բռնած սարդը:





զիմուն յանուն աղմակիցի առ մինչամ
ոչին ու ըլլանահած մի ա բաշ և արդամիջ
ին վրար, նաողաս չ յանձն և չ պատիս

Դ.

Արեն իջել էր հորիզոնիսա
վրայ, իսկ մեր երկու բարե-
կամերը դեռ խօսում էին:

— Ե՞ս, նայիր, յանկարծ
բացագանչեց խլեզը, ահա քո
քեռու տղան գալիս է. ես մոռացել ես
նրա անունը, միայն գիտեմ որ սաստիկ
տղեղ է:

Թօփալը երբ նոր եկողին տեսաւ,
մօտեցաւ նրան ասելով «Բարի երեկոյ,
քեռորդի դօդօշ»:

— Աստծոյ բարին քեղ, քոյրիկ:

— Ինչպէս երեսում է, շատ էք շտա-
պում, քեռորդի, եկէք մի քիչ զրոյց
անենք. ինձ մօտ կայ մէկը, որ շատ է ցան-
կանում ձեզ հետ ծանօթանալ:

— Շատ եմ ափսոսում, որ ժամանակ
չունեմ, բոյրիկ. այն բանջարանոցը պիտի
գնամ կաղամըներ նայելու, չեմ կարող
ուշանալ, մնաք բարով:

— Քո քեռու տղան իսկի քաղաքա-
վարի չէ, բացագանչեց Աշումուժիկը և
ինչ տղեղ է. միթէ նա քո ազգականն
է, նա ամենսին քեղ նման չէ:

— Իհարկէ, նա իմ մօտիկ ազգականն
է և ես ընդհակառակը գտնում եմ, որ
մենք իրար շատ նման ենք. նա ունի
ինձ նման...

— Մակայն նայիր, ընդմիջեց խլէզը,
ինչպէս նա գանդաղ է առաջ գնում:
Դու, Թօփալ, կանաչ ես ու գեղեցիկ,
սիրուն, փայլուն կաշի ունես, իսկ նրա
մարմինը ծածկուած է տղեղ բշտիկներով:

— Ճիշտ է, բարեկամ, բայց նա մեղա-
ւոր չէ որ տղեղ է. նրան պէտք է խրդ-
ճալ, որովհետև բոլորն էլ նրանից փախ-
չում են: Երբէք արտաքինով չպէտք է
դատել: Դօդօշը այն բարի էակներից է,
որոնց մարդիկ պիտի օրհնեն, որովհետև
որոնց մարդիկ պիտի ամբողջ կեանքը անց են
նրանք իրանց ամբողջ կեանքը անց են
կացնում ոչնչացնելով այն միջատները,
որոնք բանջարեղին են կրծում: Մարդիկ
որոնք բանջարեղին են դէպի նրանց. իսկ ես
շատ անարդար են դէպի նրանց. իսկ ես
սիրում եմ դօդօշին, որովհետև նա դը-
բախտ է:

—Ուրեմն ես էլ կըսիրեմ նրան, ասաց
Աշխուժիկը: Բայց արդէն գիշեր է և ան-
կասկած ծնողներս ինձ կըյանդիմանեն,
որ այսպէս ուշացել եմ: Մնաս բարով,
Թօփայ:

—Ցաւեսութիւն, սիրելի Աշխուժիկ:



պատրած բզողից էլ յախօթ սեռն
Եթե պատրածը չէ ուսի միջնուն
էլ յահարդ պատագ զահար սեղմակը
ուր առաջ առաջ առաջ սեղմակը

ասաւ գեղեցիկ յունիս
ամիսը:

Ամեն երեկոյ քնե-
լուց առաջ Աշխուժիկը
ականջ է զնում գորտե-
րի աղմկավի երգերին:

Այսօր երկինքը ամպամած է, ամբողջ
առաւօտը անձրև էր գալիս. կէսօրուայ
մօտ արևի մի ճառագայթ ճեղքեց ամ-
պերը և Աշխուժիկը, որի սիրու ձան-
ձրոյթից պատռում էր, իւր փոքրիկ
դունչը հանեց երկու քարի արանքից:

—Հա, զ՞ու ես, սիրելի գորտիկ, բացագանչեց նա նկատելով իւր բարեկամուհուն: Ի՞նչ սարսափելի եղանակ է:

Նախ՝ ես չեմ ուզում, որ դու ինձ
գործիկ կանչես, այդպէս էին ասում
ինձ, երբ դեռ փոքր էի, իսկ հիմա

անունս Թօփալ է։ Երկրորդ՝ եղանակը
ամենևին վատ չէ, ընդհակառակը, մեզ-
գորտերիս համար հիանալի եղանակ է։

—Ինչպէս տեսնում եմ, Թօփալ, դու
այսօր վատ ես տրամադրուած։

—Ամենևին ոչ, սիրելիս, վերջին
օրերս այնպէս անտանելի շոգ էր. ինչ
կըդառնային իմ ձուերը, եթէ այս լաւ
անձրել չգար։

—Քո ձուերը, դու ձու ես ածել և
դրա մասին ոչինչ չես ասել ինձ, այ,
դու ծածկամիտ։

—Այս. նայիր խրամատի խոքում
այդ գեղնագոյն կոյտը, որի վրայ անթիւ
ու կէտեր են երեւում, այդ կէտերի
ամեն մէկը մի մի ձու է։

—Բայց դու, անշնորհք, ինչու ես
նրանց ջրի մէջ ածել, կրփչանան։

—Ես... պատասխանում է գորտը շփո-
թուած, չգիտեմ, բայց կարծեմ բոլոր
գորտերը ջրի մէջ են ձու ածում։ Ես էլ
միւսների նման եմ արել։

Ութ օրից յետոյ Աշխուժիկը իւր
սովորական այգելութեան ժամանակ իւր
բարեկամուհուն գտաւ երկու թաղանթա-

պատ թաթիկները քամակին ձգած անշարժ
ջրի երեսին։ Գորտը շատ ուրախ էր
երեսում։

—Արի տես, Աշխուժիկ, բացագանչեց
նա հեռուից, իմ փոքրիկները ձուից դուրս
են գալիս։

—Ինչպէս, այս տարօրինակ կենդանի-
ները քո փոքրիկներն են։ Ո՞չ, Թօփալ,
այդ անկարելի է։

—Այս, այս, հաւատացնում եմ քեզ.
միթէ չես տեսնում, որ նոքա իմ ձուե-
րից են դուրս գալիս։ Սիրուն են այն-
պէս չէ։

—Սիրուն... Այդպիսի ահագին գլուխ-
ներնվ, քրքջալով բացագանչեց Աշխու-
ժիկը, դու երեխ հանար ես անում,
Թօփալ։ Այս, նրանք պոչ էլ ունեն. ապա
ինչպէս պիտի նստեն խոտի մէջ. ես նոր
եմ իմանում, որ գորտերը պոչ ունին։

Թօփալը չի պատասխանում։ Նա շատ
տիսուր է. այժմ ինքն իրան է հարցնում,
թէ արդեօք այս մոխրագոյն կենդանի-
ները, որոնք թաթեր չունին և միայն ի-
րանց պոչով են լողում, իսկապէս իւր
երեխաներն են։

—Վայ, յանկարծ բացազնչեց Աշ-
խուժիկը, ահա մէկը մի տերևէ ուտում
ջրի խորքում։ Դէհ, ասաց Թօփալ, դու
երբեմիցէ տեսնել ես մի գորտ բոյս ուտե-
լիս։

—Ախը ես հաստատ գիտեմ, որ
նրանք իմ ձուից են դուրս եկել, մըր-
մուաց Թօփալը արտասուքը աչքերին։

—Հա, ես գիտեմ, ասաց յանկարծ
Աշխուժիկը, այս փոքրիկ կենդանիները
ձկներ են։

—Ուրեմն ես ոչինչ չեմ հասկանում,
հառաչեց գորտը տխուր հեռանալով։



լիմեա ուժը և պայծը զուսկոյ մաս
-արքանց վեցորդի ու առաջն խոհանութը
իոյ ամբոն կամ այլու անոյ պատճեն
ու յարածաւը չըսր 9.



գոստոսի մի տաք օր էր:
Խլէզների մի ամբողջ
խումբ պառկած էր պա-
տի վրայ։ Նրանք բոլորն
էլ լաւ էին ճաշել և, ինչ-
պէս խլէզների սովորու-
թիւնն է, մարսելու ժամանակ հանգստա-
նում էին արևի տակ։

—Որքան ուրախ եմ, որ քեզ գտայ,
սիրելի Աշխուժիկ, ասաց Թօփալը, որ
հէնց այդ ժամանակ Ջրի երեսն էր բարձրա-
նում շունչ քաշելու. ես մի լուր ունեմ քեզ
յայտնելու. այս փոքրիկ գորշագոյն կեն-
դանիները, որոնք լողում են խրամատի
մէջ, այժմ հաստատ գիտեմ, որ իմ երե-
խաներն են. այդ բանն ինձ ասաց հօր-
եղբայրս՝ թռչկոտողը. վերջապէս արի
ու ինքդ տես։ Երկու բարեկամները հա-

սան խրամատի եզերքը և Աշխուժիկը զարմանքով տեսաւ, որ փոքրիկ կենդանիները հիմա երկու թաթ ունին, իսկ պոչը կարճացել է։

— Լսիր, Աշխուժիկ, ասաց Թօփալը, Ես ճիշտ էի ասում. սրանք գորտերի երեխաներ են, նրանց անունը շերեփուկ է։ Շուտով նրանք էլ ինձ նման սիրուն կանաչ գորտեր կըդառնան։

— Յանկարծ Թօփալը կանգ առաւ. Նա լսեց երեխայի ձայնի նման մի բարակ թոյլ ձայն։

— Օգնութիւն, օգնեցէք, խեղդում եմ։

Երկու բարեկամները տեսան մի շերեփուկ, որը ուզենալով խրամատի ափին մօտենալ՝ մնացել էր խոտերի մէջ բըռնուած. Նա պառկած էր մէջքի վրայ և իւր փոքրիկ մարմնով դողում էր։

— Վայ, սրան ի՞նչ է պատահել, ասաց գորտը։ Հա, յիշում եմ, հօրեղբայրս ինձ ասաց, որ շերեփուկները ջրի մէջ են շնչում ձկների նման։ Խեղճ, այս ըռպէիս նա կըխեղդուի, ի՞նչ անենք։

Թօփալը մի ելք գտաւ. վագեց և

թրըմփ, ընկաւ ջրի մէջ ու հրեց հիւանդին իւր դնչով։ Բայց երկի արդէն ուշ էր։ Փոքրիկ մարմինը անշարժ մնաց ջրի երեսին և ահա մի խումբ եղբայրներ ու քոյրեր սարսափահար նայելով նրան՝ լողում են նրա շուրջը։

— Նա մեռել է, խեղճ փոքրիկս, ասում է մայր գորտը, լաց լինելով։

— Նայիր, Թօփալ, յանկարծ ասաց խլէզը, ինձ թւում է որ նա շարժում է... Այս, այս, մի թաթը շարժեց։

Խսկապէս շերեփուկը քիչ քիչ ուշքի էր գալիս։

— Ո՞րտեղ եմ ես, ինքն իրան հարցնում էր նա զարմացած նայելով իւր եղբայրներին ու քոյրերին, որոնք նրա չորս կողմը շրջան էին կազմել։ Հա, յիշում եմ. Ես ցատկեցի խոտի վրայ մօտիկից տեսնելու այն երկար քթով պարոնին, որ շարունակ մայրիկի հետ խօսում է։ Այսուհետեւ էլ այդպիսի յիմարութիւն չեմ անի. Ի՞նչ լաւ է ջուրը։



մասնաւութեան առջև գոյց ապաց պինդոց
պարզա մարդա վեցա ըլամ փուշմբ զայ մէր
ինձ վասն ծաղացմա զավական թիզզուՓ ողը
առանձ առանձ առանձ ին ահե և մէխման
առանձ առանձ առանձ առանձ առանձ առանձ



մառուայ վերջը ոչ մի
շերեփուկ չէր մնացել
խրամատի մէջ։

Ո՞րտեղ էին նրանք,
կաւուտելով և խմե-

լով նրանք արդէն մե-

ծացել էին, պոչը ընկել էր. նրանք
հիմա փոքրիկ գորտեր են և շունչ են
քաշում թոքերով իրանց մօր նման։
Սրանք էլ նրա պէս առաջից ունեն եր-
կու կարճ թաթիկներ, իսկ ետևից երկու
երկար թաղանթապատ թաթիկներ։ Առա-
ջին անգամ ջրից դուրս գալիս մեր փոք-
րիկ գորտերը շատ վախեցան, բայց և
այնպէս վճռեցին իրանց մօրը հետևել.
Երբ նրանք հասան սիրուն կանաչ խո-
տերին, սկսեցին գլուխկոնձի տալև թըռչ-
կոտել։ Նրանք մըցում էին իրար հետ,

թէ որը ամենից բարձր կըթոչի։ Նրան-
ցից մէկը, հէնց այն փոքրիկ անխելքը,
որը քիչ էր մնացել խեղղուէր, այնպի-
սի հիանալի ոստումներ էր անում, որ
խրամատի բոլոր գորտերը հաւաքուել
էին նայելու։

Իհարկէ նրանց մէջ կային և ան-
շնորհները. օրինակ՝ ամենափոքրը, որ մի
ըոպէ չուզեց հեռանալ իւր մօրից, որով-
հետև հէնց առաջին անգամ թռչելիս՝
վայր էր ընկել և քիթ ու մոռւթը ջարդել։

Նրանք սովորեցին իրանց մօտով ան-
ցնող միջատները բռնել։

Մլակների մի ամբողջ բանակ պա-
րում էր խրամատի վրայ, և երբ ջահիլ
գորտերը նրանց համն առան, այլևս չու-
զեցին ուրիշ բան ուտել։

Հետևեալ գարնանը հարկաւոր էր եր-
գել սովորել։ Թօփալի ձայնը, ինչպէս
բոլոր մայր գորտերինը, խոպոտ էր, ուս-
տի երեխաներին երգեցողութեան դասեր
տալու համար մի յայտնի երաժիշտ հրա-
ւիրուեց, մի ծերունի հայր-գորտ, որը
հիանալի ձայն ունէր։

Փոքրիկ աշակերտները մեծ յառաջա-

դիմութիւն ցոյց տուին, և միքանի վարժութիւններից յետոյ կարողացան երգել գորտերի բոլոր եղանակները:

Տար երեկոներին անվերջ համերգ
ներ էին լինում մեր խրամատի եզերին:
Գորտիկները պատմում էին աշխարհին ի-
րանց բաղդը: Ապա երբ ըոլոր աստղերը
վառում էին իրանց փոքրիկ լապտերները,
նրանք տեղաւորուում էին լայն նունուփարի
տերևների վրայ և հանգիստ քնում: Մայր
թօփալը բախտաւոր էր զգում իրան: Աշ-
խուժիկն էլ ուրախ ապրում էր իւր ըն-
տանիքի ծոցում:




1	Վայրի կազմակեր (սպառուած)	8
2	Առաջին վիշտ (սպառուած).	10
3	Անտառապահը (սպառուած).	12
4	Աշխէնն եւ Մարգարիտը (սպառ.)	10
5	Աղքատի քախտը (սպառ.)	5
6	Գոհարիկն ու Աստղիկը (սպառ.)	10
7	Նելլօն ու Պատրաշը	10
8	Գիւղում (սպառ.)	20
9	Կենդանինք է արդեօք	8
10	Բացեկամներ (սպառ.)	12
11	Առակներ բնական պատմութիւնից	12
12	Մագնիս	12
13	Արջի պատմութիւնը: Գայլը	15
14	Ողնիներ	8
15	Թմրփիկը	12
16	Լեռան աղջիկը	20
17	Բու	12
18	Փոքրիկ Պարոյրի արկածները	15
19	Փիղ	8
20	Ռուբէնի զբաղմունքը	25
21	Որք Աննան	12
22	Արցոնար	15
23	Անձնազո՞ն մանուկ.	10
24	Դարեւոր կաղնի	6
25	Խրամատի եղերքին	10

Դիմել թվականուներին:

Պատրաստ են տպագրութեան համար՝

- 1 Հուսատունիկ
 - 2 Ներկայացում՝ գոմում
 - 3 Կարլ Լիննէյ



ՀՀ Ազգային գրադարան



NL0391008

1819

